ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ա.Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

1920-ական թվականների երկրորդ կեսը և 1930-ականները նախկին խորհրդային երկրում աչքի են ընկնում սուր քաղաքական բախումներով: 1924թ. հունվարին, Վ.Լենինի մահից հետո, կոմունիստական կուսակցության մեջ անզիջում պայքար սկսվեց առաջնորդի տեղը գրավելու համար, որն ավարտվեց կուսակցական ապարատի թելերն իր ձեռքը հավաքած Ի.Ստալինի հաղթանակով: Ի վերջո, Լ. Տրոցկուն սպանեցին Մեքսիկայում[1]:

1925թ. ԽՍՀՄ-ում ձևավորվեց «Նոր օպոզիցիա», որը գլխավորում էին Զինովևը և Կամենևը: Այդ օպոզիցիայի ջախջախումն ավարտվեց 1927թ. Համկ(բ)Կ XV համագումարում[2]: Այդ տարիներին բանավեճերը մեկ երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, միջակ գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի հաստատման, հեղափոխության սոցիալիստական բնույթի, գաղութային երկրների հեղափոխություններին օժանդակելու, համաշխարհային բանվորական շարժման միասնական ճակատի տակտիկայի հարցերի շուրջ էին[3]:

Կուսակցության ներսում գաղափարական պայքարը գնալով ավելի կտրուկ և անզիջում բնույթ էր ստանում: Երբ 1930թ. արդեն որպես «աջ» կամ «տրոցկիստական աջ թեքում» որակավորված Բուխարինի, Ռիկովի և Տոմսկու ղեկավարած շարժման դեմ էին պայքարում, Ի.Ստալինի ելույթը XVI համագումարում ավելի անհանդուրժողական էր և կոշտ: Հենց այստեղ նա նշեց, թե սրվել է դասակարգային պայքարը, ուժեղացել մահացող դասակարգերի դիմադրությունը խորհրդային իշխանությանը[4]: Աջ թեքման ներկայացուցիչները, ըստ Ի.Ստալինի, միայն ձևական էին ընդունում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը մեկ երկրում և չէին համաձայնում իրենց առաջադրած ճանապարհների հետ: Առավել վտանգավոր էր տրված կարգախոսը. «Առաջիկայում էլ շարունակենք անհաշտ պայքարը կուսակցության մեջի այն հաշտվողական տարրերի դեմ, որոնք չեն հասկանում երկու ճակատով վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը»[5]:

1934թ. Համկ(բ)Կ XVII համագումարում Ի.Ստալինը հայտարարեց. «Եթե XV համագումարում հարկ էր լինում դեռևս ապացուցել կուսակցության գծի ճշտությունը և պայքար մղել հակալենինյան որոշ խմբավորումների դեմ, իսկ XVI համագումարում վերջնականապես ջախջախել այդ խմբավորումների վերջին կողմնակիցներին, ապա այս համագումարում ապացուցելու բան չկա ու թերևս հարվածելու մարդ էլ չկա (ընդգծումը մերն է – Ա.Մ.)»: Ապա նա նշեց, թե դա չի նշանակում, որ գաղափարական պայքարը ավարտված է, քանզի

---

[1] Вопросы разведки и контрразведки, 1997, № 19.

[2] Տե՛ս КПСС в резолюциях и решениях, ч. 2, М., 1954, с. 440 – 441, 488 – 491; История КПСС, М., 1982, с. 395.

[3] Լենինիզմ, քրեստոմատիա, պրակ II, Ե., 1935, էջ 353 – 360:

[4] Նույն տեղում, էջ 378:

[5] Նույն տեղում, էջ 385:

«կուսակցության թշնամիների գաղափարախոսության մնացորդները դեռ ապրում են» :

Ստալինի ելույթը տրամադրում էր փնտրելու նոր թշնամիներ: Ճակատագրի գառը բերումով այդ «թշնամիների» շարքում հայտնվեցին նաև նշված համագումարի 1961 պատգամավորներից 1108-ը, և կենտկոմի կազմում ընտրվածներից 98-ը (70 %-ը)[7]: Վերոհիշյալ գաղափարական առճակատումը զուգահեռ անց էին կացվում կուսակցության շարքերի զտման (1933թ.), կուսակցական փաստաթղթերի ստուգման ու փոխանակման (1935 - 1936թթ.) միջոցառումներ:

ՀամԿ(բ)Կ XVII համագումարի օրերին Ի.Ստալինը զգաց, որ իր մենիշխանությունը հաստատելու ճանապարհին կարող են առաջանալ լուրջ խոչընդոտներ: Մասնավորապես, արդեն հայտնի է, որ այդ համագումարի որոշ մասնակիցներ Ս.Կիրովին առաջարկել են ստանձնելու առաջին քարտուղարի պաշտոնը, որից նա հրաժարվել է: Փաստ է նաև այն, որ մոտ 300 պատգամավորներ դեմ էին քվեարկել Ստալինի թեկնածությանը, որի մասին նա չէր կարող չիմանալ :

1934թ. դեկտեմբերին Ս.Կիրովը սպանվում է Լենինգրադում (Ս.Պետերբուրգ): Սպանությունը վերագրվում է աջ-տրոցկիստական կենտրոնին: Սա ազդանշան էր հետագա տարիների և հատկապես 1937 - 1938թթ. զանգվածային բռնությունների համար: Ըստ վերջին ուսումնասիրությունների, 1937 - 1938թթ. բռնադատվել է 1,4 մլն մարդ[9]: ՍՄԿԿ XX համագումարում ստեղծված Պ.Պոսպելովի գլխավորած հատուկ հանձնաժողովն իր հաշվետվության մեջ նշեց, որ 1935 - 1940թթ. երկրում հակախորհրդային գործունեության մեղադրանքով ձերբակալվել են 1 մլն 635 հազ. մարդ, որոնցից 688503-ը գնդակահարվել է[10]:

Երկիրն օբյեկտիվորեն ձգվում էր դեպի «ուժեղ» ձեռք, որի ներկայացուցիչներն էին իշխանության երկու գլխավոր հավակնորդները՝ Ի.Ստալինն ու Լ.Տրոցկին: Առկա էր նաև արտասահմանից հրահրվող ընդհատակյա կազմակերպությունների գործունեությունը[11]: Այս ամենն օբյեկտիվորեն նպաստում էին Ի.Ստալինին՝ հաստատելու մենատիրություն, որը խիստ համընկնում էր նրա բնավորագրին՝ տրված դեռևս Վ.Լենինի կողմից՝ 1924 թվականին[12]:

Զանգվածային կոլեկտիվացման շարժումը (1929 - 1930թթ.) դրսևորեց զանգվածային բռնությունների նկատմամբ երկրի ղեկավարի հակումները, որոնք առավել դաժան արտահայտվեցին 1937 - 1938թթ. բռնությունների և հետպատերազմյան՝ 1949թ. զանգվածային աքսորի ժամանակ:

Հարկ է անդրադառնալ մի կարևոր հարցի ևս. տվյալ ժամանակաշրջանում իշխող կուսակցությունը կոշտ վերաբերմունք էր ցուցաբերում նաև տարբեր

---

[6] Նույն տեղում, էջ 394 - 395:

[7] М.Горинов и др., История России, М., 1995, с. 247.

[8] Д.Волкогонов, Триумф и трагедия: И.В.Сталин, политический портрет, кн. 1, ч. 2, М., 1989, с. 95.

[9] В.П.Дмитриенко и др., История Отечества, XX в, М., 1995, с. 246.

[10] Նույն տեղում, էջ 433:

[11] Տե՛ս Д.Голинков, Крушение антисоветского подполья в СССР, кн. 2, М., 1986, с. 266 - 339.

[12] Տե՛ս ՍՄԿԿ պատմություն, Ե., 1959, էջ 450:

հանրապետություններում այսպես թե այնպես արտահայտվող ազգային դրսևորումների նկատմամբ[13]:

ԽՍՀՄ հանրապետություններից մեկը՝ Հայաստանը, բնականաբար, ապրեց վերը նշված իրադարձությունները՝ կրելով ստալինյան քաղաքականության բոլոր դրսևորումները: Այդ ամենն առաջին հերթին իրենց վրա կրում էին հանրապետության հասարակական-քաղաքական գործիչները, որոնք կամա թե ակամա դառնում էին դրանց կտարողները, մասնակիցները և զոհերը: Հարկ է հիշել, որ 1918 - 1920թթ. Հայաստանում դաշնակցական կուսակցության առաջնորդությամբ հռչակված Առաջին հանրապետության փաստը, ապա Հայոնի պատճառներով նրա փոխարինումը Խորհրդային Հայաստանով՝ խոր հետք էին թողել 1920 - 1930-ական թվականների Հայաստանի վրա, և դաշնակցության «վտանգը» խորհրդային իշխանության համար առարկայական էր: Մյուս յուրահատկությունն այն է, որ հայազգի քաղաքական գործիչները ակտիվորեն մասնակցել էին Ռուսաստանի հեղափոխական, քաղաքական կյանքին և բացի ակտիվ ու Հայոնի բոլշևիկներից ճանաչված գործիչներ ունեին մենշևիկների, էսէռների և այլ կուսակցությունների մեջ, որոնք հետագայում որակավորվում էին որպես հակախորհրդային և այլն: Տրոցկիստական շարժման մեջ աչքի էր ընկնում Վազարշակ Տեր-Վահանյանը, որին ՀամԿ(բ)Կ XV համագումարում հեռացրին կուսակցության շարքերից: Նույն ճակատագրին արժանացավ Սապրոնովի խմբի անդամ Ն.Զավարյանը[14]: Հետագայում ժողովրդի թշնամի հայտարարված Ռիկովի հետ բավական երկար ժամանակ աշխատել է Ս.Տեր-Գաբրիելյանը և այլն:

Հայաստանում քաղաքացիական կռիվներից հետո առաջին՝ համեմատաբար դանդվածային բռնությունը տեղի ունեցավ 1921 - 1922թթ., երբ 1400 նախկին սպաներ աքսորվեցին Ռյազան[15]: 1923թ. անցկացվեց դաշնակցության այսպես կոչված «ինքնավերացման» համադումարը, որի առիթով Հայաստանում ինքնաբացահայտվեցին այդ կուսակցության ավելի քան 4000 անդամներ: 1924թ. տեղի ունեցավ նաև Դաշերիտմիության ինքնավերացման համագումարը: Հենց նրանց անդամներն էլ հետագա տարիներին դարձան բռնությունների առաջին զոհերը:

Բռնարարքների մյուս մեծ ալիքը բարձրացավ 1929 - 1933թթ. համատարած կոլեկտիվացման շրջանում, երբ բռնությունների ենթարկվեց հիմնականում գյուղական վայրերում ապրող 5615 մարդ: Բռնությունների այս շրջանում ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատում (ՆԳԺԿ) կազմված գործերում որպես հիմնական մեղադրանք էին հնչում հակախորհրդային, հակակոլտնտեսային, բանդիտական, դաշնակցական գործունեությունը, երբեմն՝ տրոցկիզմը: Վերջինիս դեպքում էլ բռնարարքները կապված էին գյուղացիության հարցերին առնչվող մարդկանց հետ, ինչպես օրինակ՝ 1933թ. հողկոմժողկոմատի դատապարտված աշխատակիցների (Հ.Քամալյան, Ս.Մինքայելյան և այլն) խմբի ձերբակալումն ու դատապարտումը: Նշենք նաև, որ տվյալ ժամանակահատվածում գնդակահարվածների թիվը հետագա՝ 1937 - 1938թթ. համեմատությամբ քիչ էր և կազմում էր 104 մարդ:

1936թ. մայիսին Հայոնի հասարակական-քաղաքական գործիչ, գիտնական Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությունից և նույն թվականի հուլիսի 9-ին

---

[13] Լենինիզմ, Քրեստոմատիա, պրակ II էջ 379:
[14] Տես КПСС в резолюциях и решениях, ч. 2, с. 490:
[15] Հայություն, նոյեմբեր 1992, մայիս 1994:

Թբիլիսիում տեղի ունեցած Ա.Խանջյանի «ինքնասպանությունից» հետո սկսվում են զանգվածային բռնությունները Հայաստանի հասարակաքաղաքական գործիչների, մտավորականության, զինվորականության, եկեղեցու և այլ ոլորտների հայտնի ներկայացուցիչների նկատմամբ, որոնք շարունակվում են մինչև 1937թ. սեպտեմբերը:

1937թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումից հետո բռնությունները շարունակվում են այս անգամ այն քաղաքական, պետական գործիչների նկատմամբ, որոնք նախորդ տարիների հանցագործությունների հեղինակներն էին:

Ընդհանուր առմամբ 1937 - 1938թթ. բռնությունների են ենթարկվում 8104 մարդ, որոնցից 4530-ը գնդակահարվում են: Նշենք, որ բռնությունները զանգվածային բնույթ կրեցին նաև 1949թ., երբ Հայաստանից աքսորվեց շուրջ 2700 ընտանիք կամ մոտավորապես 12000 մարդ:

Այսպիսով՝ 1920 - 1953թթ. Հայաստանում բռնությունների ենթարկված մարդկանց թվաքանակը, ըստ ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվում կատարած մեր ուսումնասիրությունների, կազմում է ավելի քան 25 հազար մարդ:

1937 - 1938թթ. դատավճիռների, եռյակի որոշումների մեջ ամենահաճախ նշվող մեղադրանքը հակախորհրդային գործունեությունն է՝ 3729 անգամ, ապա դաշնակցական գործունեությունը՝ 1333, այնուհետև հակահեղափոխական գործունեությունը՝ 508, տրոցկիզմը՝ 109 և, ինչքան էլ տարօրինակ թվա, ընդամենը 9 հոգի մեղադրվում է «մաքուր» ազգայնամոլական գործունեության «հանցանքի» մեջ[16]:

Սակայն բազմաթիվ գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականում ՀԽՍՀ ՆԳԺԿ-ում կազմված գրեթե բոլոր մեղադրական եզրակացությունների մեջ վերը նշած մեղադրանքների կողքին անպայման նշվում էր, որ մեղադրվողները զբաղվել են ազգայնամոլական («նացիոնալիստական») գործունեությամբ:

Հայաստանում առաջին հերթին անգիջում պայքար էր հայտարարված Դաշնակցության դեմ, որը արտասահմանից, մասնավորապես Իրանից, աշխատանքներ էր կազմակերպում խորհրդային իշխանության դեմ, ինչպես հիշատակում էր Իրանում, ապա Թուրքիայում ՆԳԺԿ ՄՊԳՎ հետախուզության ռեզիդենտ Գ.Աղաբեկովը, որը 1930 թ. փախել էր ԽՍՀՄ-ից[17]: Դրա վկայությունն է նաև այն, որ 1929թ. ՀԽՍՀ ՆԳԺԿ մարմինները Հայաստանում բացահայտել էին մի մեծ, ճյուղավորված, ընդհատակյա դաշնակցական կազմակերպություն, որը հակախորհրդային գործունեություն էր ծավալել Հանրապետությունում[18]: Այսինքն՝ 1920-ական թվականներին Հայաստանում առկա էր իշխանությունների և դաշնակցականների հակամարտությունը, որը հետագայում՝ 1937 - 1938թթ., օգտագործվեց իշխանությունների կողմից՝ բռնությունների ենթարկելու նաև բոլոր նախկին իրական և ոչ իրական դաշնակցականներին և այդ նույն պատերների վրա՝ նաև նախկին ռամկավար ու հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչներին, որոնք ևս որակավորվեցին որպես ազգայնամոլներ: Սակայն Հայաստանի հասարակական-

---

[16] Իրան-Նամե, 1997, № 2 - 3, էջ 3 - 6:

[17] Տես С.Агабеков, ГПУ, Записки чекиста, 1930, с. 115 - 116, Ռ.Մարաիբոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Ե., 1986, էջ 16:

[18] ՀՀ Ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության ազգային անվտանգության կարճված գործերի ֆոնդ (այսուհետև՝ ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ ԿԳՖ), գ. 13129, թ. 2560:

քաղաքական գործիչների հիմնական մասը, եթե ոչ բոլորը, նախկինում չէին անդամակցել հայկական ավանդական կուսակցություններին, այլ եղել էին ՌՍԴԲԿ-ի, ապա մենշևիկների, էսէռների և այլ սոցիալիստական կուսակցությունների անդամներ: Դա ևս օգտագործեցին բռնությունները իրագործողները:

Հայաստանի հասարակական-քաղաքական իրականության նկատմամբ Խորհրդային իշխանությունների գնահատականները շատ հստակ երևում են արդեն 1937թ. սեպտեմբերից հետո ձերբակալված Հայաստանի պետական, քաղաքական գործիչների ցուցմունքներից: Այստեղ կարևորում ենք ոչ թե այն, թե ինչքանով էր համապատասխանում նրանց պատմածը իրականությանը, այլ այն գնահատականները, որոնք տրվում էին այդ տարիներին կոնկրետ իրադարձություններին և անձերին: Այսպես՝ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի ղեկավար, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և բյուրոյի անդամ Մուղդուսու Հարցաքննության արձանագրություններից մեկում կարդում ենք. «Եթե հետևենք Հայաստանում խորհրդային կարգերի գոյության ողջ պատմությանը և վերլուծենք այստեղ կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինների գործունեությունը, ապա դժվար չի լինի հաստատել, որ այդ ղեկավար մարմիններն են սիստեմատիկաբար ներթափանցել և ակտիվորեն անցկացրել իրենց գիծը (ես նկատի ունեմ հիարկե խորհրդային ժամանակաշրջանը) թունդ ազգայնամոլները: Ազգայնամոլությանը Հայաստանի խորհրդայնացման ամենասկզբում հավատարմորեն ծառայել են հայկական «սպեցիֆիկները», որոնց պետք է համարել ՀամԿ(բ)Կ-ի՝ խորհրդային իշխանությունների դեմ կազմակերպված պայքարի սկզբնավորողներ: Նրանք իրենց բնույթով նույն դաշնակցականներն էին: Այդ պայքարը, բարդ ազգային զուգակցումների պայմաններում, ունեցավ մի շարք շրջաններ:

Սկսած 1921թ. մինչև 1927թ. Հայաստանի կուսակցական-խորհրդային ղեկավարությունը գտնվում էր «սպեցիֆիկների» (Մյասնիկով, Լուկաշին, Աշոտ Իսահակյան, Կարինյան, Համբարձումյան և ուրիշներ) ձեռքում: Նրանց քաղաքական գիծը գրեթե չէր տարբերվում դաշնակների գծից:

1927թ. «սպեցիֆիկների» ղեկավարության մեջ գլխավոր դերը խաղում էին ԺԳԿ-ի նախագահ Տեր-Գաբրիելյանը և Կենտկոմի քարտուղար Հայկ Հովսեփյանը: Հատկապես այդ ժամանակ Հայաստանում իրենց գործունեությունը ծավալեցին տրոցկիստները: Այսպիսով՝ 1930 - 1931թթ. Հայաստանի ղեկավարության մեջ էին ազգայնամոլ Խանջյանը, տրոցկիստ Վարդանյանը և աջ Տեր-Գաբրիելյանը:

Այդ ժամանակահատվածը պետք է համարել ՀամԿ(բ)Կ-ի և խորհրդային իշխանությունների դեմ հետագա ակտիվ պայքարի ծավալման համար կադրերի կազմակերպման և տրոցկիստների, ազգայնամոլների ու աջերի միավորման ժամանակամիջոց...

Այս ամենը պատմեցի, որպեսզի հասկանալի լինի, որ Հայաստանում գոյություն ուներ միասնական հակախորհրդային կազմակերպություն, և, որ նրան մասնակցելով, տրոցկիստները և աջերը ճնշող մեծամասնությամբ եղել են ազգայնամոլներ, որոնք կանգնած էին Խորհրդային Միությունից Հայաստանի անջատման դիրքերում»[19]:

Այդ տարիների իրադարձությունների մասին նույն դատողություններն են արձանագրված նաև 1937թ. սեպտեմբերին ձերբակալված ՀամԿ(բ)Կ առաջին

[19] Նույն տեղում, գ. 10953, հ. 1, թ. 15 - 18:

քարտուղար Ա.Ամատունու, քարտուղար Ստ.Ակոպովի և մյուսների հարցաքննություններում[20]:

Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանում 1930-ական թվականների ստալինյան զանգվածային բռնությունների առաջին զոհերն էին Ն.Ստեփանյանը և Ա.Խանջյանը: Հարկ է նշել, որ Ա.Խանջյանը, անկախ նրա քաղաքական գործունեության այս կամ այն գնահատականից, ունեցել է ազգային կեցվածք, հարգված և սիրված է եղել ժողովրդի կողմից: Նա ամեն կերպ դիմակայել է հատկապես ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի կողմից կատարվող ճնշումներին: Սակայն 1936թ. մայիսին, երկար դիմադրությունից հետո, նա ստիպված էր համաձայնություն տալ ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ, գիտնական Ն.Ստեփանյանի ձերբակալությանը, իսկ մեկ ամիս անց՝ 1936թ. հուլիսի 9-ին ինքը սպանվեց ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Լ.Բերիայի աշխատասենյակում[21]: Անգամ արտասահմանի դաշնակցական մամուլը Ա.Խանջյանի մահվան կապակցությամբ հիշատակում էր, թե 1936թ. հունիսի 1 - 4-ը կայացած ՀամԿ(բ)Կ ԿԿ լիագումար նիստի ժամանակ «ընդունված նոր Սահմանադրության նախագծի և մասնավորապես Անդրկովկասյան Դաշնակցության վերացման հարցի շուրջը խոր տարակարծություններ ունեցավ կուսակցության ղեկավար շրջանների հետ և դրա հետևանքով դրվեց այնպիսի վիճակի մեջ, որ ստիպված եղավ վերջ տալ իր կյանքին»[22]:

Իշխանությունները պաշտոնապես հայտարարում են, որ Ա.Խանջյանը ինքնասպանություն է գործել: Հուլիսի 12-ին, նրա թաղման օրը, տեղի է ունենում Հայաստանի կուսակտիվի ժողով, որտեղ ելույթ ունեցած 23 մասնակիցները առանց իտրականության մեղադրում էին կուսակցության նախկին ղեկավարին՝ դավաճանության, ազգայնամոլության, հակահեղափոխական տրոցկիստական տարրերին (մասնավորապես Ն.Ստեփանյանին) հովանավորելու և այլ «մեղքերի» մեջ[23]: Այն, որ կուսակցական բարձրագույն ղեկավարությունը դժգոհ էր Ա.Խանջյանից, հստակ երևում է վերոհիշյալ ժողովում ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ս.Կուդրյավցևի ելույթից, որտեղ նա նշում է, որ Հայաստանում 1936թ. զարնանից ձերբակալված տրոցկիստների քանակը անհամեմատ քիչ է հարևան հանրապետություններում ձերբակալվածների քանակից, քանի որ նրանց բացահայտմանը խանգարում էր Ա.Խանջյանը: Այդ ժողովի 106 մասնակիցներից 71-ը, այդ թվում և ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ղեկավարներ Ս.Կուդրյավցևը, Մուսաբեկովը, Ագնիաշվիլին, ՀԿ(բ)Կ և պետական ղեկավարներ Ա.Ամատունին, Ստ. Ակոպովը, Գ.Ծատուրովը, Խ.Մուղդուսին և մյուսները հետագա տարիներին ևս ենթարկվեցին բռնությունների:

1936թ. հուլիսից սանձազերծված բռնությունների զոհ դարձան ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին քարտուղարներ Գ.Ալիխանյանը, Ս.Սրապիոնյանը (Լուկաչին), Ա.Հովհաննիսյանը, Հ.Հովսեփյանը, Հ.Կոստանյանը, Ա.Խանջյանը, Ա.Մարգարովը, Ա.Գալոյանը, Ս.Վարդանյանը, Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի առաջին նախագահ Ս.Կասյանը, ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախկին նախագահ Ս.Տեր-Գաբրիելյանը, ՀԽՍՀ Կենտգործկոմի նախկին նախագահներ Ս.Մարտիկյանը, Գ.Հանեսաղյանը, լուսաժողկոմներ Ն.Ստեփանյանը, Ա.Եղիազարյանը, ճանաչված կուսակցական և պետական գործիչներ

---

[20] Նույն տեղում, դ. 8997, 4234:
[21] ՏԵՍ Նժար, 2. X. 1996, Республика Армения, 9. VII. 1996:
[22] Վեմ, ԺԵ, մայիս – հունիս, Փարիզ, 1936, էջ 105:
[23] ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվ, պատմ. ֆ., դ. 186:

Դ.Շահվերդյանը, Ալ. Բեկզադյանը, Ա.Մելիքյանը, Ռ.Դաշտոյանը, Ար.Երզնկյանը և շատ ուրիշներ:

1930-ական թվականներին Հայաստանում ստալինյան բռնությունների իրական պատկերը հետազոտելու առումով խիստ կարևորվում է Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի տնօրեն, Երևանի պետհամալսարանի և մանկավարժական ինստիտուտի դասախոս, նախկին լուսժողկոմ Ներսիկ Ստեփանյանի բազմահատոր քննչական գործի ուսումնասիրությունը[24]: Նրա հետ «հանցագործ կապերի» մեջ լինելու մեղադրանքները հանդիպում են 1936 - 1938թթ. դատապարտված գրեթե բոլոր հասարակական-քաղաքական գործիչների, գիտության, դրականության և արվեստի ներկայացուցիչների գործերում, որոնք, որպես կանոն, սկսվում են հետևյալ կերպ. «ՆԳԺԿ մարմինների կողմից Հայաստանում բացահայտվել և վերացվել է հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպություն, որը նպատակադրել էր Խորհրդային իշխանության զինված տապալումը, Հայաստանի անջատումը Խորհրդային Միությունից և, այսպես անվանված, «անկախ» ազգային-բուրժուական հայկական պետության ստեղծումը՝ կապիտալիստական պետություններից մեկի հովանավորության տակ»[25]: Ըստ ՆԳԺԿ «տվյալների» վերոնշյալ կազմակերպության առաջնորդն էր Ն.Ստեփանյանը՝ Ա.Խանջյանի հովանավորությամբ կամ գլխավորությամբ:

Ավելորդ չենք համարում ներկայացնել Ն.Ստեփանյանի մեղադրական եզրակացությունում տրված հիմնական մեղադրանքները, որոնք, որոշ աննշան խմբագրական փոփոխություններով հանդիպում են գրեթե բոլոր բռնադատվածների գործերում: Այսպես՝ «1. Եղել է հակահեղափոխական, տրոցկիստական, ահաբեկչական կազմակերպության մասնակից, որը 1934թ. դեկտեմբերի 1-ին չարագործորեն իրագործել է ընկ. Ս.Մ.Կիրովի սպանությունը և ահաբեկչական ակտեր նախապատրաստել Համկ(բ)Կ և Խորհրդային իշխանության ղեկավարների դեմ:

2. Մտել է Հայաստանի տրոցկիստական-ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպության Կենտրոնի կազմի մեջ, որն իր առջև խնդիր էր դրել ահաբեկչություն իրագործել ընկ. Ստալինի նկատմամբ և ահաբեկչություն էր նախապատրաստում ընկ. Լ.Բերիայի նկատմամբ:

3. 1932թ. Հայաստանում կազմակերպել է տրոցկիստական-ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպություն, որի մեջ ընդգրկել է մի շարք մարդկանց, որոնք պատասխանատվության են կանչված այս և ուրիշ գործերով»[26]:

Հետագա տարիներին պարզվեց 1930-ական թվականների մեղադրանքների անհիմն լինելը, և փաստորեն բռնադատվածների մեծ մասը արդարացվեց: Ճիշտ է, չկար կազմակերպված գործունեություն, սակայն հասարակական-քաղաքական գործիչների և մտավորականության որոշ ներկայացուցիչներ իրոք ունեին դժգոհություններ տիրող իրավիճակից, մասնավորապես, Հայաստանի երկակի կախվածությունից՝ Թբիլիսիից (հանձինս Համկ(բ)Կ Անդրերկրյոմի) և Մոսկվայից, հավանություն չէին տալիս Ստալինի ստեղծած մենատիրության մթնոլորտին և այլն: Այդ առումով Ն.Ստեփանյանն անշուշտ աչքի է ընկել իր

[24] Տե՛ս նույն տեղում,ԿԳՖ, գ. 3036:
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում, գ. 3036, № 1, թ. 364:

համարձակ մտքերով, և պատահական չէր, որ բռնությունների առաջին զոհերից մեկը նա դարձավ[27]:

1937թ. հուլիսի 7-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիան Ն.Ստեփանյանին դատապարտում է գնդակահարության, իսկ նույն դատական մարմինը 1956թ. օգոստոսին նրան արդարացնում է՝ գործը կարճելով հանցակազմի բացակայության պատճառով:

1930-ականներին Հայաստանում կատարվող ստալինյան չարագործությունների մեջ քիչ չեն դեպքերը, երբ անպաշտպան վիճակում գտնվող անմեղ մարդկանց խոշտանգելով սպանում էին: Այդպիսի ողբերգական վախճան ունեցան նաև 1928 - 1935թթ. ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ, 1902թ. ՌՍԴԲԿ-ի անդամ, Հայաստանի բոլշևիկյան կուսակցության հիմնադիրներից Սահակ Տեր-Գաբրիելյանը, 1899թ. ՌՍԴԲԿ-ի անդամ, նախկինում հայտնի մենշևիկյան գործիչ, 1921-ից ՀամԿ(բ)Կ անդամ, ՀՕԿ-ի առաջին նախագահ Արամայիս Երզնկյանը, ՀԿ(բ)Կ ԿԿ կուսկոլեգիայի քարտուղար Աղասի Գալոյանը և ուրիշներ:

Ս.Տեր-Գաբրիելյանը ձերբակալվեց Սոսկվայում, որտեղ աշխատում էր ԽՍՀՄ թեթև արդյունաբերության ժողկոմատում և ուղարկվեց Երևան՝ մեղադրվելով «հայկական ազգայնամոլական կազմակերպության Կենտրոնի» ղեկավար լինելու մեջ, որը դաշինքի մեջ էր մտել «աջ-տրոցկիստական» կազմակերպության հետ[28]: Ջխորանալով գործում եղած անհիմն մեղադրանքների մեջ, նշենք, որ 1937թ. օգոստոսի 21-ին Ս.Տեր-Գաբրիելյանը, նետվելով կամ ՆԳԺԿ-ի աշխատակիցներ Ի.Գևորկովի և Ե.Նիկողոսովի կողմից դուրս գցվելով 3-րդ հարկի պատուհանից, մահանում է: Կան ՀԽՍՀ ՆԳԺԿ ղեկավար աշխատակիցներ Մուղդուսու, Գևորկովի և Նիկողոսովի ցուցմունքներն այն մասին, որ Ս.Տեր-Գաբրիելյանին իբր թե իրենց հանցագործությունները չբացահայտելու նպատակով սպանել են, սակայն կան նաև տվյալներ, թե նրանք այդ «խոստովանությունները» կատարել են կտտանքների ազդեցության տակ, և իրականում Ս.Տեր-Գաբրիելյանը ինքնասպանություն է գործել հարցաքննության ժամանակ՝ դուրս նետվելով պատուհանից: Ասենք, որ վերջին տվյալները Նիկողոսովի և Գևորկովի բանտախցի ընկերների պատմածներն են: Մի՞թե նրանք բանտախցում կասեին, թե իրենք են սպանել Ս.Տեր-Գաբրիելյանին: Մյուս կողմից, նրանց խոստովանությունները հարցաքննության ժամանակ կարող էին լինել խոշտանգումների հետևանք: Կարծում ենք, որ ամեն դեպքում տեղի էր ունեցել նողկալի սպանություն:

Ա.Երզնկյանը ձերբակալվեց 1936թ. նոյեմբերին և մեղադրվեց որպես «հակահեղափոխական, ազգայնամոլական խմբի ակտիվ անդամ»: Կրկին չներկայացնելով անհիմն մեղադրանքների մանրամասները՝ մեջ բերենք 1936 - 1937թթ. ՀԽՍՀ ՆԳԺԿ բարձր պաշտոնյաներից մեկի ցուցմունքը, որը հետագայում պատասխանատվության է ենթարկվել որպես անօրինականությունների մասնակից և ղեկավար ու գնդակահարվել. «Ինձ Ասլանովը (ՆԳԺԿ պարետը - Ա.Մ.) ասաց, որ նա Մուղդուսուց հանձնարարություն ունի բանտում այնպիսի պայմաններ ստեղծել ձերբակալված Երզնկյանի համար, որ նա մեռնի... Երզնկյանին տեղավորել էին ամենավատ կարցերում, այն դեպքում, երբ նա այն ժամանակ առանց այն էլ հիվանդ էր: Երզնկյանն այդ պայմանները

---

[27] Նույն տեղում, պատմ. ֆ., գ. 186, էջ 5:
[28] Նույն տեղում, ԿԴՖ, գ. 5407, հ. 2, թ. 289:

չկարողացավ տանել և կարցերում տեղավորվելուց մի քանի օր անց մահացավ»[29]:

Խոշտանգումների հետևանքով բանտում 1938թ. մայիսի 6-ին մահացավ նաև Ա.Գալոյանը[30]:

Նույն՝ 1936թ. նոյեմբերին ձերբակալվում է նաև այդ տարիների ՀՕԿ-ի նախագահ, ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի նախկին տեղակալ Արսեն Եսայանը՝ նույնպիսի մեղադրանքներով և մահվան դատապարտվում 1938թ. հուլիսի 18-ին[31]:

Եթե զուգահեռ տանենք ԽՍՀՄ-ում (կենտրոնում) և Հայաստանում կատարվող բռնությունների մեջ, ապա ակնհայտ են նույն մոտեցումները: Այսպես՝ Ի.Ստալինը «հատուկ» վերաբերմունք էր դրսևորում բոլշևիկյան հին գվարդիայի նկատմամբ ու ասպարեզից հանում էր Լենինի զինակիցներին: Դրանք հնարավոր կամ իրական հակառակորդներ էին իշխանության համար մղվող պայքարում և չափից ավելի լավ գիտեին Ստալինի անցած հեղափոխական ուղու մասին: Նույն տրամաբանությամբ տեղերում ևս վերացնում էին հնագույն բոլշևիկներին, որոնք, բացի վերոհիշյալ պատճառներից, «խանգարում» էին տեղական մասշտաբի կուսղեկավարներին: Ս.Տեր-Գաբրիելյանից, Ա.Խանջյանից, Ա.Երզնկյանից բացի այդ բռնությունների զոհ դարձան Հայաստանի հեղկոմի առաջին նախագահ Ս.Կասյանը, ՌՍԴԲԿ-ի հնագույն անդամներ Դ.Շահվերդյանը, Ստ.Շահումյանի զինակից և ազգական (քրոջ ամուսինը) Ռ.Դաշտոյանը, Ալ.Բեկզադյանը, Ա.Մելիքյանը և ուրիշներ: Նրանք իրենց հեղինակությամբ հավանաբար խանգարում էին ոչ միայն ՀԿ(բ)Կ-ի ԿԿ-ի նոր ղեկավարներին, այլև ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ղեկավարներին, որոնց 1936 – 1937թթ. գլխավորում էր տխրահռչակ Լ.Բերիան:

Քանի որ վերոհիշյալ գործիչների մեղադրանքները գրեթե չէին տարբերվում իրարից, ուստի ներկայացնենք դրանցից մի քանիսը: Այսպես՝ 1937թ. հուլիսին ձերբակալված Ռուբեն Դաշտոյանին 1938թ. հուլիսի 18-ին դատապարտում են գնակահարության այն մեղադրանքով, որ նա եղել է Հայաստանում գործող հակախորհրդային աջ-տրոցկիստական ազգայնամոլական ահաբեկչական կազմակերպության անդամ և օգտագործելով ԿԳԿ-ի նախագահի տեղակալի իր պաշտոնը՝ խանգարում էր կուսակցության և կառավարության գյուղատնտեսական խնդիրները կատարելուն և այլն[32]: Գրեթե նույնությամբ այն կրկնվում է 1937թ. փետրվարին ձերբակալված և 10 տարի ազատազրկման դատապարտված Դանիել (Դանուշ) Շահվերդյանի մեղադրականում, որտեղ նշվում է, թե նա «ՀամԿ(բ)Կ շարքերում լինելով երկերեսանի հակահեղափոխական, տրոցկիստ-ազգայնամոլ, 1931թ. հարել է Ստեփան Վարդանյանի (այդ տարիների ՀԿ(բ)Կ ԿԿ 2-րդ քարտուղար – Ա.Մ.) հ-հ (հակահեղափոխական – Ա.Մ.) տրոցկիստական խմբին» և այլն[33]:

Այդ տարիների համար խիստ բնորոշ էր 1936թ. հուլիսի 12-ին կայացած Հայաստանի կուսակտիվի ժողովի մասնակիցների մեծ մասի ճակատագիրը, ուստի ավելի մանրամասն անդրադառնանք այդ իրադարձությանը: Ա.Խանջյանի իրավ համաժողովրդական թաղման արարողությունից հետո Երևանում ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ներկայացուցիչներ Կուդրյավցևի,

---

[29] Նույն տեղում, դ. 908, թ. 144, մանրամասն տե՛ս Ազգ, 5. III, 1996:
[30] ՀՀ ՆԴ և ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԴՖ, գ. 1214, Ազգ, 9. III. 1996:
[31] Նույն տեղում, գ. 731:
[32] Նույն տեղում, գ. 6935, թ. 100 – 104:
[33] Նույն տեղում, գ. 17, թ. 236:

Մուսաբեկովի, Ազնիաշվիլու մասնակցությամբ տեղի ունեցավ վերոհիշյալ ժողովը, որտեղ քննարկվում էր ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին առաջին քարտուղար Ա.Խանջյանի ինքնասպանության հարցը: Ժողովի գրեթե բոլոր մասնակիցները, այդ թվում և Թբիլիսիից եկած հյուրերը մասնակցել էին Հայաստանի նախկին ղեկավարի թաղման արարողությանը: Ժողովի ժամանակ ելույթ ունեցան 23 հռետորներ, որոնք առանց բացառության դատապարտեցին Ա.Խանջյանի «դավաճանական արարքը», միաժամանակ մեղադրանքներ հնչեցնելով նրա մտերիմների և արդեն ձերբակալված Ն.Ստեփանյանի հասցեին: Դժվար է միանշանակ ասել, թե նրանցից ովքեր էին անկեղծ, ովքեր էին աթոռի ակնկալիքով շարժվում կամ ովքեր էին փորձում փրկել իրենց և ընտանիքի անդամներին հնարավոր բռնարարքներից: Սակայն, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղարներ Ա.Ամատունին, Ստ.Ակոպովը, շրջկոմի քարտուղարներ Գ.Մատուրովը, Մ.Դանիելյանը, ՆԳԺԿ ղեկավար Խ.Մուղդուսին և մի շարք այլ գործիչներ մտել էին վերևից իջեցված իրենց դերի մեջ: Անհանդուրժողականության մթնոլորտում ընթացող ժողովի այդ և ուրիշ ներկայացուցիչներ արդեն իսկ այնպիսի մեղադրանքներ էին նետում իրենց կուսակցական ընկերների հասցեին, որոնք մի քանի ամիս անց, գրեթե նույնությամբ, կրկնվում էին ՆԳԺԿ-ում կազմված մեղադրական եզրակացությունների մեջ: Բերենք մի բնորոշ Օրինակ: Ժողովականների կողմից, բառիս բուն իմաստով, հարձակում սկսվեց ելույթ ունեցող Թալինի շրջկոմի առաջին քարտուղար Ընձակ Տեր-Վահանյանի դեմ: Պատճառը ակնհայտ էր: Նրա եղբայրը Հայոնի տրոցկիստ Վաղարշակ Տեր-Վահանյանն էր, որը 1927թ. ստորագրել էր «46»-ի հայտարարությունը և համարվում էր համամիութենական աջ-տրոցկիստական կենտրոնի անդամ: Նա, իհարկե, բռնադատվել էր միութենական համապատասխան մարմինների կողմից: Ահա, այդ ամենը գիտենալով հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ էին որոշ ժողովականներ, մասնավորապես ԱՀ-ի նախկին աշխատակից Գ.Մատուրովը և անձամբ Ս.Կուզրյավցևը, փաստացի խաչաձև հարցաքննություն սկսել Ը.Տեր-Վահանյանի նկատմամբ: Նրանց հետաքրքրում էր, թե որտե՞ղ և ե՞րբ է հանդիպել իր եղբորը, ինչի՞ մասին են խոսել և, բնականաբար, մեղադրում էին տրոցկիստական հայացքների մեջ: Դժվար չէ կռահել, թե այդ ամենից հետո ինչ էր սպասվում նվիրված բոլշևիկ Ը.Տեր-Վահանյանին: Մեկ ամիս անց՝ 1936թ. օգոստոսի 22-ին, նրան վտարում են ՀամԿ(բ)Կ շարքերից և ձերբակալում, իսկ 1937թ. հուլիսի 8-ին դատարանի վճռով, որտեղ նշված էր, թե եղել է հակահեղափոխական կազմակերպության անդամ և «հակահեղափոխական» կազմակերպական կապ էր պաշտպանում եղբոր՝ Տեր-Վահանյանի հետ, գնդակահարում[34]:

Ժողովին հաջորդած ամիսներին Հայաստանում սկսվում են հասարակական-քաղաքական գործիչների, մտավորականների և այլ խավերի ճանաչված ներկայացուցիչների զանգվածային ձերբակալությունները, որոնց մեջ առաջին հերթին Ա.Խանջյանի մտերիմներն էին: Ինչպես արդեն հիշատակել ենք, բռնությունների ենթարկվեցին նաև այդ ժողովի մասնակիցների 70 %-ը՝ ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոյի անդամներ Գ.Հանեսօղլյանը, Ա.Անանյանը, Մ.Ենգիբարյանը, Ս.Մարտիկյանը, Թաղի-Զադեն, Շահսուվարովը: Սակայն բռնություններից զերծ չմնացին նաև նույն բյուրոյի անդամներ Ա.Ամատունին, Ստ. Ակոպովը, Խ.Մուղդուսին: Այսինքն, բռնադատվեց ողջ բյուրոյի կազմը:

[34] Նույն տեղում, գ. 2512, հ. 1, թ. 6, 203:

Նույն դառը բախտին արժանացան ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոյի թեկնածուներ Լ.Արիսյանը, Ա.Եղիազարյանը և Ա.Շահբաթյանը:

Մինչև 1937թ. սեպտեմբերը ձերբակալված հասարակական-քաղաքական գործիչներին մեղադրում էին իբրև Ա.Խանջյանի, Ն.Ստեփանյանի, Ս.Տեր-Գաբրիելյանի կողմից ղեկավարվող հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպության անդամներ, իսկ սեպտեմբերյան պլենումի ժամանակ ձերբակալված Ա.Ամատունուն, Ստ.Ակոպովին, Խ.Մուղդուսուն, Գ.Ծատուրովին և մյուսներին, տալով նույն մեղադրանքները, ավելացնում էին, թե այդ կազմակերպությունը իբրև թե շարունակել է գլխավորել ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա.Ամատունին:

Դեռևս հնարավոր չէ հաստատ հայտարարել, թե ինչքան է Հայաստանում 1930-ականներին բռնադատվածներից հասարակական-քաղաքական գործիչների ստույգ թվաքանակը, սակայն ստացված նախնական թիվն արդեն իսկ խոսում է այն մասին, որ դա բավականին լուրջ կորուստ էր հայ հասարակական-քաղաքական ներուժի համար: Այսպես՝ ըստ ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվի ԿԳԲ-ի ցուցակային տվյալների, 1936 - 1938թթ. նրանց թիվը կազմում է 69 մարդ, որոնցից 33-ը գնդակահարվել են, իսկ մյուսները ստացել տարբեր ժամկետների ազատազրկում: Սակայն վերոհիշյալ ժողովի մասնակիցների հետագա ճակատագիրը ճշտելու նպատակով մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տվյալ ցուցակում չկան ժողովին մասնակցած և հետագայում բռնադատված 15 հոգու անուններ, ուստի անվարան ընդհանուր թվաքանակին կարելի է ավելացնել այդ անունները, և այն կդառնա 84 հասարակական-քաղաքական գործիչ: Այնուամենայնիվ, հարկ է հաշվի առնել, որ ցուցակներում նախկին հայտնի հասարակական-քաղաքական գործիչներից ոմանք կարող են ներկայացված լինել որպես թոշակառուներ կամ ձերբակալվելիս աշխատել են, ասենք, որպես հրատարակչության տնօրեններ կամ թերթերի, ամսագրերի խմբագիրներ և այլն: Այնպես որ 100-ի հասնող ճանաչված հասարակական-քաղաքական գործիչների քանակը զգալի հարված էր Հայաստանի ակտիվ մտավոր ներուժին: Համեմատության համար բերենք, մեր ճշտած, 1930-ական թվականներին բռնադատված գիտության, արվեստի և գրականության գործիչների թվաքանակը՝ 98 մարդ: Նրանց մեջ էին հասարակական-քաղաքական գործիչներ Ն.Ստեփանյանը, Ե.Չուբարը, Ա.Հախումյանը, Թ.Ավդալբեգյանը, Պ.Մակինցյանը և ուրիշներ:

Կրկին ներկայացնենք 1936թ. հուլիսի 12-ի ժողովի մասնակիցներից մի քանիսի մեղադրանքները, որպեսզի առավել ամբողջանա չարագործության բնույթն ու չափը: Այսպես՝ նախկին լուսժողկոմ Ա.Եղիազարյանը ձերբակալվում է 1936թ. նոյեմբերին և մեղադրվում որպես հակախորհրդային աջ-տրոցկիստական կազմակերպության ղեկավարներից մեկը: Նշենք, որ 1935թ. Խանջյանի դեմ Ա.Երզնկյանի, Ա.Եսայանի և Ա.Եղիազարյանի կողմից մի նամակ էր պատրաստվել և ուղարկվել ՀամԿ(բ)Կ, որը հայկոմկուսի վերնախավի միջև ընթացող ներպաշտոնական պայքարի արտահայտությունն էր: Այդ նամակը ՀամԿ(բ)Կ Կենտկոմը անհիմն էր գնահատել, սակայն, ինչպես նկատելի է, այդ նամակը պատրաստողները բոլորն էլ բռնադատվեցին իշխանությունների կողմից: Հետաքրքիր է, որ Ա.Խանջյանի դեմ պայքարողները նրա մահն ընդունել էին ցավով: Ա.Եղիազարյանը, մասնավորապես իր զրույցներից մեկում ասել էր, թե ինքը գտնում էր, որ դա կօգտագործվի Ա.Ամատունու, Ս.Ակոպովի և Խ.Մուղդուսու կողմից՝ պայքար ծավալելու «հայկական ազգայնամոլության» դեմ, և Անդրերկրկոմի քաղաքական գիծն արդարացնելու համար կոկայի

«երիտասարդների ծեծը»[35]: Ա.Եղիազարյանը մահացել էր բանտում չդիմանալով կտտանքներին, իսկ Ա.Եսայանին գնդակահարել էին: Նրանց բոլորին մեղադրել էին Ա.Խանջյանի հետ «հանցագործ» կապի մեջ լինելու համար: Նույն մեղադրանքով ձերբակալվեցին ՀԽՍՀ Կենտգործկոմի նախկին նախագահներ Գ.Հանեսօղլյանը և Ս.Մարտիկյանը, որոնցից առաջինը գնդակահարվեց ՀԽՍՀ եռյակի որոշմամբ, իսկ երկրորդը ստացավ 8 տարի ազատազրկում: Ուշադրավ է 1902թ. կուսակցական ակտիվ գործիչ Ս.Մարտիկյանի 1956թ. գրությունը՝ Ս.Տեր-Գաբրիելյանի գործը վերանայելու կապակցությամբ: Այնտեղ, մասնավորապես, նշվում է, որ «1935թ. Ս.Տեր-Գաբրիելյանը չկարողացավ տանել այն մթնոլորտը, որը ստեղծել էին Թբիլիսիից եկած Ակոպովը, Ծատուրովը, Մուղդուսին և մյուսները, իրեն պաշտոնից ազատելու մասին գիմում տվեց ՀամԿ(բ)Կ ԿԿ, որը հարգվեց: Այնուհետև սկսվեցին ինտրիգներն ու հալածանքները հենց Խանջյանի դեմ, որը 1936թ. հուլիսին ինքնասպանություն կատարեց: Դրանից հետո՝ 1936թ. վերջերին և 1937թ. սկզբներին, սկսվում են ազնիվ կուսակցականների և խորհրդային կադրերի զանգվածային ձերբակալությունները... Բոլոր նրանց մեղադրում էին աջ-տրոցկիստական, ազգայնամոլական-հակաբեկչական կազմակերպության մասնակցելու մեջ, որը գլխավորում էին Խանջյանը և Տեր-Գաբրիելյանը...»[36]:

Նույն մեղադրանքներով գնդակահարվեցին Հ.Ղարիբյանը (շրջկոմի քարտուղար),Հ.Դեմիրճյանը (շրջկոմի քարտուղար), Մ.Դանիելյանը (ժողկոմխորհի նախագահ), Ռ.Դաշտոյանը (ժողկոմխորհի քարտուղար), Ն.Կուրսելը (ճանաչված քաղաքական գործիչ, գործարանի տնօրեն), Վ.Մամիկոնյանը (պետբանկի տնօրեն), Պ.Պետրոսյանը (շրջկոմի քարտուղար), Լ.Արիայանը (լուժողկոմ), Ա.Դաստակյանը (առևտրի ժողկոմ) և շատ ուրիշներ:

Մի փոքր այլ մոտեցում է պահանջում 1937թ. ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի սեպտեմբերյան պլենումի ժամանակ և նրանից հետո ձերբակալված քաղաքական գործիչների գործերի ուսումնասիրությունը: Ինչպես հայտնի է, այդ պլենումին մասնակցելու համար Հայաստան էին ուղարկվել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ներկայացուցիչներ Մալենկովը, Միկոյանը և Բերիան: Հենց պլենումի ժամանակ ձերբակալվեցին ՀԿ(բ)Կ քարտուղարներ Ամատունին, Ստ.Ակոպովը և ՆԳԺԿ ժողկոմ Մուղդուսին: Այնուհետև, ձերբակալվում են նաև նույն քաղաքական գործիչների հետ մինչ այդ Հայաստանում ՀամԿ(բ)Կ ԿԿ գիծը անշեղորեն կիրառած այլ քաղաքական գործիչներ, ՀԽՍՀ ՆԳԺԿ բազմաթիվ ղեկավար և շարքային աշխատողներ, որոնցից առաջինները կրկին մեղադրվում էին աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպության անդամներ լինելու մեջ, իսկ երկրորդները՝ նաև անօրինականություններ կատարելու համար: Այստեղ, իհարկե, գործում էր բռնապետին հատուկ երկաթյա տրամաբանությունը, որի համաձայն պարբերաբար ասպարեզից վերացվում էին ոճրագործությունների կատարածները և վկաները:

Տարօրինակ է, բայց փաստ, որ անկախ այն բանից, թե տվյալ գործիչները ունեին ինչ-ինչ մեղքեր կամ իրապես հանցագործություններ էին կատարել, նրանց նկատմամբ կա կիրառվում էին անօրինական բռնություններ, շատ դեպքերում տրվում էին անհիմն մեղադրանքներ (ասենք, Ա.Խանջյանի ղեկավարած հակահեղափոխական, ազգայնամոլական կազմակերպության անդամ լինելը և այլն): Դրա վկայությունն է, օրինակ, այն փաստը, որ

[35] Նույն տեղում, գ. 5407, հ. 2, թ. 40:
[36] Նույն տեղում, թ. 220:

Ա.Ամատունու գործը վերանայելիս՝ 1977թ. այն կարճվել է[37]: Իհարկե, ոչ ոք չի կարող ժխտել, որ հենց նրա ղեկավարության օրոք է կատարվել հանրապետության մտավոր, քաղաքական սերուցքի անխնա ջարդը, նամակ ուղարկվել Համկ(բ)Կ Կենտկոմ, որտեղ խնդրում էին ավելացնել Հայաստանում բռնությունների ենթակա քաղաքացիների թվաքանակը՝ և այլն: Սակայն անդամ նրա մահվան դատավճիռը կատարվել է՝ չպաշտպանելով օրենքի պահանջները[39]:

Նման մոտեցում է պահանջում նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար Ստ.Ալոպովի, ժողկոմ Գ.Մատուրովի և մյուսների գործերի քննությունը, որոնցից առաջինին գնդակահարեցին, իսկ երկրորդը ստացավ 8 տարի աղատազրկում[40]:

Բնականաբար, անխնա վերացվեցին նաև Հայաստանի բռնությունները իրագործող հիմնական դերակատարները՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի անդամ, ՀԽՍՀ ժողկոմ Մուղդուսին, նրա տեղակալ Գևորկով, ՆԳԺԿ բարձրաստիճան աշխատակիցներ Նիկոլոսովը, Կոստիկյանը և ուրիշներ:

1937թ. սեպտեմբերին Համկ(բ)Կ ԿԿ պատվիրակության հետ Լիտվինի ղեկավարությամբ գործող ԽՍՀՄ ՆԳԺԿ քննիչները՝ Այլտմանը, Գեյմանը, Ցախոնտովը, իրենց նախկին գործընկերների նկատմամբ ցույց տվեցին նույնպիսի դաժանություն և ցինիզմ «խոստովանություններ» կորզելու նպատակով, ինչպիսին ցույց էին տվել նրանք իրենց անմեղ զոհերի նկատմամբ: Օրինակ, այդ պայմաններում գտնվող Մուղդուսին ձերբակալման հենց առաջին օրվանից տալիս էր «անկեղծ խոստովանանքներ», սակայն միևնույն էր՝ նրան խոշտանգում էին և վերջիվերջո դատապարտեցին գնդակահարության[41]: Չխորանալով նրանց, այսպես կոչված, հետաքննությունների մանրամասների մեջ, հիշատակենք ընդամենը մեկ փաստ Մուղդուսու գործունեության մասին: Ինչպես նշված է ԽՍՀՄ զինվորական դատախազության 1958թ. եզրակացության մեջ, «պարզվել է, որ 1937թ. օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի ԽՍՀ ՆԳԺԿ եոյակը Մուղդուսու ղեկավարությամբ քննել է 354 մարդու հետաքննչական գործեր, որոնցից ՊԱՉ-ի (պատժի առավելագույն չափի – Ա.Մ.) դատապարտվել են 304 մարդ և տարբեր պատժաչափեր են ստացել 50 մարդ»[42]: Սա, իհարկե, նրա կատարած բռնարարքների ամբողջ պատկերը չէ: Բռնությունների տրամաբանությամբ քննիչներ Լիտվինը, Այլտմանը, Ցախոնտովը, Գեյմանը և մյուսները ևս հետագայում բռնադատվեցին[43]:

1937թ. սեպտեմբերից հետո ձերբակալված քաղաքական գործիչների, մասնավորապես Համկ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ամատունու, Ստ.Ալոպովի ղեկավարման շրջանում կատարված գառը իրողությունն էր պատկերված 1955թ. ՀԽՍՀ ՆԽ կից ՊԱԿ-ի կողմից կազմված «Հանրապետության ղեկավար, պատասխանատու և գիտական աշխատողների, ինչպես նաև մասնագետների «աջ-տրոցկիստական-ազգայնամոլական» կենտրոնի մասնակիցների, որոնք բռնադատվել են 1936թ. հունիսից մինչև 1937թ. սեպտեմբերի 23-ը ընկած

---

[37] Նույն տեղում, գ. 8997, հ. 4, թ. 136 – 142:
[38] Известия, 3. IV. 1996:
[39] ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԴՖ, գ. 8997, հ. 1, թ. 210 – 212:
[40] Նույն տեղում, գ. 4234, 3823:
[41] Նույն տեղում, գ. 10953:
[42] Նույն տեղում, գ. 10953, № 2, թ. 451:
[43] Նույն տեղում, գ. 5407, № 2, թ. 13, 327, 330:

ժամանակաշրջանում» ցուցակը, որտեղ թվարկվում են 69 ճանաչված մարդկանց անուններ (Ե.Չարենց, Ա.Բակունց, Ս.Տեր-Գաբրիելյան, Գ.Հանեսաղյան, Գ.Գումեղին, Ս.Մարտիկյան, Մ.Մազմանյան, Ե.Չուքար, Ա.Իոննիսյան, Մ.Ջանան և այլն)[44]: Կարծում ենք, որ այդ ցուցակն, այնուամենայնիվ, ամբողջական չէ:

Ինչպես արդեն հիշատակել ենք, տվյալ տարիների մեղադրանքներում հիմնական «աջ-տրոցկիստական-ազգայնամոլական» գործունեությունից բացի, երբեմն հանդիպում էին նաև ուրիշները, այդ թվում նաև էսէռների կուսակցության պատկանելությունը: Այդ մեղադրանքով 1938թ. հունվարին ձերբակալվեց մի խումբ (Գ.Աղամալյան, Վ.Մուղոյան, Գ.Տեր-Հակոբյան, Ա.Նալբանդյան, Խ.Կեմչյան, Պ.Թարվերդյան, Մ.Շահպարոնյան, Ս.Մարկոսյան), այն պատճառով, որ նրանք «մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը եղել են էսէռների կուսակցության անդամներ և հետագայում, մինչև ձերբակալվելը վարել են ակտիվ թշնամական կազմակերպված աշխատանք»: Այս խմբի անդամները 1956թ. արդարացվեցին հանցանքն ապացուցված չլինելու պատճառով[45]:

1930-ականի վերջերին ԽՍՀՄ-ում ամրապնդվեց կոմկուսի ամենատիրությունը (տոտալիտարիզմը) և Ի.Ստալինի անձի պաշտամունքը: Հասարակությունը, որը կրեց աննախադեպ բռնություններ՝ անպաշտպան էր դարձել ճնշման ահավոր մեքենայի առաջ: Սակայն համընդհանուր ահաբեկչությունը ծայրահեղորեն լարել էր քաղաքական ներքին մթնոլորտը, որը վտանգել էր նաև իշխանավորների վիճակը: Միևնույն ժամանակ, արտաքին աշխարհում մութ ամպեր էին կուտակվում խորհրդային երկրի վրա, որը մոտալուտ ծանր պատերազմ էր կանխագուշակում: Բացարձակ միապետության հասած Ի.Ստալինը չէր կարող չզգալ այդ վտանգները, ուստի կառավարման թելը ձեռքից բաց չթողնելու համար անհրաժեշտ էին մեղմացուցիչ քայլեր: Նաև դրանով կարելի է բացատրել 1938թ. նոյեմբերի 17-ին Ի.Ստալինի ու ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ Վ.Մոլոտովի ստորագրությամբ, խիստ գաղտնի վերտառությամբ «Ձերբակալությունների, դատախազական վերահսկողության և քննությունները վարելու մասին» որոշման ի հայտ գալը, որն ուղարկվեց բոլոր տեղական կազմակերպություններին: Փաստաթղթում պահանջվում էր ավելի վստահելի միջոցներով անխնա պայքար մղել ԽՍՀՄ-ի բոլոր թշնամիների դեմ: Ինչպես պարզվում է փաստաթղթից, 1937 - 1938թթ. ՆԳԺԿ մարմինների կողմից թշնամական տարրերի ջախջախման և արմատախիլ անելու զանգվածային միջոցառումները հանգեցրել էին մի շարք «խոշորագույն թերությունների և խեղաթյուրումների ՆԳԺԿ և դատախազության մարմինների մոտ», ավելին՝ ժողովրդի թշնամիները և արտասահմանյան հետախուզության լրտեսները խցկվել էին այդ մարմինները և կանխամտածված խեղաթյուրելով խորհրդային օրենքները՝ անց էին կացրել զանգվածային և անհիմն ձերբակալություններ[46]: Ինչպես նկատելի է, ԽՍՀՄ ղեկավարությունը քավության նոխազ է ընտրում իր իսկ ցուցումները հավատարմորեն կատարողներին:

Կենտրոնի այդ որոշումով վերացվեցին դատական եռյակները: Նույն տարվա դեկտեմբերի 1-ին հրապարակվում է «Ձերբակալությունների կարգի

---

[44] Նույն տեղում, գ. 8997, № 3, թ. 5 – 18:
[45] Նույն տեղում, գ. 3076, № 6, թ. 217, 315 – 317:
[46] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 18, գ. 18, թ. 2:

մասին» որոշումը, որը կազմված էր նույն ոգով[47] և հատկապես շեշտում էր եռյակների վերացման իրողությունը: Բնականաբար, այդ և Կենտրոնում ընդունված մյուս որոշումներն արտահայտվեցին նաև Հայաստանում, ուր 1938թ. երկրորդ կեսին ևս նկատվեց բռնությունների զգալի նվազում: Այսպիսով, 1930-ական թվականների ստալինյան բռնությունները Հայաստանում լուրջ հարված հասցրին նաև քաղաքական մտքին և սոցիալապես ակտիվ խավերին, որն իր բացասական ազդեցությունը թողեց հետագա տարիներին:

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ДЕЯТЕЛИ АРМЕНИИ В ГОДЫ СТАЛИНСКИХ РЕПРЕССИЙ

А.С.МАНУКЯН

Резюме

Массовые репрессии в отношении общественно-политических деятелей, интеллигенции, офицеров, духовенства и др. начались со второй половины 1936г., когда по обвинению в "контрреволюционной, право-троцкистской, националистической" деятельности арестовали известного политического деятеля и ученого Нерсика Степаняна, а 9 июля того же года покончил жизнь "самоубийством" первый секретарь ЦК КП(б)А Агаси Ханджян. По предварительным данным, за эти годы были репрессированы свыше ста общественно-политических деятелей Армении.

Сталинские репрессии в Армении нанесли серьезный удар по представителям политической мысли и социально активным слоям населения, что имело отрицательный резонанс и в последующие годы.

[47] Նույն տեղում, ֆ. 1, ց. 18, գ. 18, թ. 11: